ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌԸ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ Է ՈՒՆԵՑԵԼ ԱԼԼԱՀՇՅՈՒՔՈՒՐ ՓԱՇԱ-ՋԱԴԵԻ ՀԵՏ

Ի պատասխան Կովկասի մուսուլմանների կրոնապետի հունվարի 30-ի հեռախոսազանգի, փետրվարի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տեղեկացրել է Ալլահշյուքուր Փաշա-զադեին՝ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի հետ ունեցած իր հեռախոսազրույցի մասին, որի ընթացքում ԼՂՀ նախագահը պատրաստակամություն է հայտնել ազատ արձակել հունվարի 8-ին Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում վիրավորված և գերի ընկած ադրբեջանցի զինվոր Էլմեդդին Աբիևին:

Նորին Սրբությունը հաղորդել է, որ Աբիևը գտնվում է բժշկական խնամքի ներքո, և նրա արձակման առնչությամբ հարկ է, որ Ադրբեջանի և ԼՂՀ ռազմագերիների, պատանդների և անհետ կորածների հարցերով պետական հանձնաժողովները ճշտեն ռազմագերու վերադարձմանն առնչվող մանրամասները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ